բեզմանատան մէջ (պարկ. 44)(1)։ Խաչարձանի ծագման հանգամանքները բացատրող արձանագրութիւնը հետևեալն է, որ գըտնուում է գարնէզի և մեծ պատուանդանի վերայ.

1. ի թվ. ՉԺԷ. ի թագաւորութեան...(անմ)
2. ահին ՀայՀ ես տր (Թ)ուման կանգնեցի
   զսՀ նչա
3. նս վասն յերկար կենաց պարոն Սա-
   դունին եւ զաւակաց իւրոց
4. եւ յիշատ
5. ակ հոգո ի
6. մո եւ ծն
7. ողաց իմո

8. որք երկրպ
9. ագէք կենս
10. արեր նչ
11. նիս զմեզ
12. յիշեցէք
13. ի քՀ

Այստեղ յիշատակուած պարոն Սադունը մեզ յայտնի է արդէն Հաղբատի Ամենափրկչի արձանագրութիւնից. տարաբաղդաբար ոչինչ գիտենք արձանը կանգնող «տր Թուման»ի մասին, որ հաւանօրէն եպիսկոպոս էր, «տէր» կոչմանը նայելով, գուցէ, Յոհաննայ վանքի, թէև ուրիշ աղբիւրներից յայտնի չէ։

Խաչի երկու կողմերից և պատուանդանի վերայ եղած արձանագրութիւնը, որ մի ամբողջութիւն էր և դաւանաբանական բնոյթ ունէր, ուրեմն և կարևոր խաչարձանի հասկացողութեան համար, փճացած է և բոլորը չի կարդացուում.

ԱՀ անեղ անմահ ...(յաւ)իտէնից ... ի ? սՀ կուսէն .... / .... (արեգակի Ես լուսոյ պարկերնէրի պակ) / է .... ձին հեզ .. ին դրունք զժոխոց .. զաոջին տեղին տայ ի (ազ կողմից նայողի վերից վար)/ր ծնընդ ? (բուն խաչի պակ) եւքն մայրեն ... /

Խաչարձանի բարձրութիւնն է 6,39 մ., բուն խաչի լայնքը 1,71, իսկ մնացած մասերում զանազան(2)։ Կեդրոնական մեծ խաչի գլխին ծաղկազարդ ելնդաւոր գրերով կարդացուում է.

ՍՀ ՀՀ ՑՀ ՔՀ որդի ՀայՀ.

Սրա տակը, երկու գարնէզների մէջ, խաչի վերին թևի երկու կողմից անորոշ կենդանիների մէջքին արեգակ և լուսին, որ բըռնել են երկու թևաւոր հրեշտակներ։ Մեծ խաչի հորիզոնական թևերի տակ քանդակուած են դարձեալ մի մի խաչ, որոնց արմատներից ոչ միայն արմաւենիկի ցողուններ են դուրս եկել և դէպի վեր բարձրացել, ինչպէս սովորական են մեր խաչքարերի արուեստի մէջ, այլ և հաստատուած մի մի բոլորակ վարդեակի վերայ, որոնց մակերևոյթը ծածկուած է նոյն արմաւենիկների և ցողունների հիւսուածքով։ Մեծ խաչը իւր հերթին հաստատուած է մի փոքր վարդեակի և պատուանդանի վերայ։ Խաչերի դաշտերը զարդարուած են արմաւենիկի ցողունների քանդակներով։

Այս նկարագրութիւնից պարզ է, որ այստեղ մի սովորական խաչ չէ, որ ունինք, այլ խաչով խաչելութեան արտայայտութիւն, որի ապացոյցներն են արեգակի և լուսնի դիցաբանական երևոյթները, ինչպէս և ճակատի մակագրութիւնը «սՀ ՀՀ» և այլն, կամ շրջանակի եղծուած արձանագրութիւնը, որի իմաստն է մօտաւորապէս, թէ Անեղն ու Անմահը մարմնանալով և խաչուելով փրկուել են զերուած հոգիները (դրունք դժոխոց)։ Հէնց այս մըտքով էլ այս տեսակի խաչքարերը իրենց պէսպիսութիւններով Ամենափրկիչ անունն են կրում, և ինչպէս կ'տեսնենք, նոյն միտքն էլ քանդակագործական պատկերագրութեան նիւթ է դարձել յետին ժամանակի մի օրինակից դատելով։

Վեղիի ձախ վտակի ակունքների մօտ՝ Շահապլու և Ղադրլու գիւղերի մէջ, Զինջիրլուի Ս. Կարապետից դէպի հիւսիս, դէպի Վեղիի հովիտը նայող սարալանջի վերայ, գտնուում է մի մատուռ, Աղքիլիսայ կոչուած։ Մատուռը շինուած է «ի թվ. ՉԾԵ» Ռուբէն, Խաչատուր և Եղիա եղբայրների կողմից. արևմտեան պատի մէջ՝ դրան կողքին՝ հագցրած է մի խաչքար, որ Խաչատուր եղբայրը կանգնել է իւր աւագ եղբօր յիշատակին.

«Ի թվ. ՉԽԸ. ես / Խաչատուր / կանկնեցի զխաչս ի բա / րէխաւսութի Ռուբենին / եւ մեզ եւ ծնողաց մեր»։

(1) Այս գեղեցիկ խաչարձանի պատկերը տպել է A. Tchobanian. La Roseraie d'Arménie III. 1929. եր. 260, մեր ուղարկած լուսանկարից։

(2) Բուն խաչը 1,96 × 1,28 մետր, — առաջին պատուանդանը 0,77 × 1,71 մետր լայնքը, դուրս ընկած 0,18 մետր. երկրորդ պատուանդանը գարնէզից մինչեւ երրորդ պատուանդանը 1,9 մետր։